*ստացաւ զսա եւ ետ գրել խմոյս տկարութե· յիշատակ հոգւոյ ի մխիթարութի· եւ ի սփոփանս ցաւալից կենաց· եւ ի բժշկութի· ախտալից ծառաց եւ խորհրդոց, հոգւոց եւ մարմնոց, ի կեանս եւ ի մահ, եւ պաշար անդառնալի ճանապարհին, եւ յետ մահու մասնակից լինելով համաւրէն ամ· սրբոցն որ ի սմա: Արդ եղեւ գրաւ գրչութե· այսմ ածաշունչ· մատենի ի թվականութե· հայկազեան տումարի ի ՋԸ: թվլի, եւ ի վշտաշատ ժամանակի, յորում նեղիմք յանաւրինաց եւ յանիրաւ պահանջողաց· ի թագաւորութեն· Վրաց Ալէքսանդրէ· եւ ի հայրապետութե· հայոց տն· Գրիգորի յաթոռ սբ· Էջմիածնին· ի ղանութե· Ջահան չահի որդւոյ Ղարայուսուֆին:*

*Արդ գրեցաւ սա ի յերկնահանգետ եւ ի գերահռչակ սբ· ուխտս Այրիվանս վերաձայնելոյ, ընդ հովանեաւ մաւրս լուսոյ սբ· ածածնիս· եւ հրաշափառ եւ երկնանման սբ· կաթուղիկէիս եւ ածընկալ· սբ· նշանացս եւ արեամբ ներկեալ անմահին Ցի· սբ· գեղարդեանս եւ սբ· աջերոյս, Յովհաննու մկրտչին ձեռնադրողին Քի·, եւ սբ· աջոյ Բարդողիմէոսի առաքելոյն եւ համաւրէն ամ· սրբոցս որ աստ կան հաւաքեալ ուժակութբ·* (s!) *հոգւոյն սրբոյ եւ կամակցութբ·սբ·եղբարցս եւ բազմերախտ հոգւոյ հաւր մեր եւ վարժապետացն տր· Ներսեսի եւ ամ· սրբութեց· վարպետի տր· Յոհս· ծաղկողի, որ բազում երախտիք ունի ի վերայ մեր, եւ միաբան ամ· հաւատացելոց քրիստոնէից:*

*Ձեռամբ ամենամեղ փցուն եւ անարհեստ գրչի Մաթս· անարժան աբեղայի, որ զանունս միայն ունիմ կրաւնաւորի եւ ոչ զգործս բարութե·: Վս· որոյ աղաչեմք զամենեսեան, որք լուսաւորիք սովաւ կարդալով կամ աւրինակելով եւ կամ հոգեւոր խրախճանութբ· զտաւն սրբոցս կատարելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր ի տաւնս տրունականս եւ յամ· սրբոցն, զոր սովաւ կատարէք, զԱծատուր· քհանայն·, խնդրելով զթողութի· մեղաց· եւ անջինջ յիշատակաւ գրելով զնա ի գիրն կենաց· ամէն: Նաեւ բարեպաշտ եւ ածասէր· ծնաւղաց նորին, հաւրն իւրոյ Խոցադեղին եւ մաւրն Հոփսիմէին եւ հաւրեղբաւրն Յովանիսին եւ եղբաւրն Պոռչին եւ ամ· արեան մերձաւորացն կենդանեաց եւ ննջեցելոցն եղիցի յիշատակ նոցա մասին աւհութե· ընդ սրս· ամ· եւ ի թողութի· մեղաց, ասելով ի խորոց սրտէ· թէ տր· ԱԾ· ողորմեա նց· եւ հանգոյ զնոսա ի քում յարքայութեդ·, ամէն եղիցի եղիցի:*

*Այլ եւ վայելողք սբ· գրոցս եւ հանդիպողք սորա տեսանելով կամ աւրինակելով, որք աւգտիք ի սմանէ յիշեսջիք զմեզ եւ զվերոյ գրեալսդ՝ զԱծատուր· քահանայ եւ զծնաւղսն իւր եւ զամ· արեան մերձաւորսն: Նաեւ զխս զմեղապարտս, նկարաւղս Ստեփաննոս, ըստ հոգւոյ հարազատ եղբայր սորայ, որ վասն ջերմեռանդ սիրոյ նորա ծաղկեցի եւ նկարեցի եւ կազմեցի, որ է մեր հոգւոյս անջինջ յիշատակ եւ դուռն կենաց եւ բանալի սբ· արքայութեն· եւ Քս· ԱԾ· ձեզ յիշողացդ եւ մեզ յիշեցելոցս առհասարակ ողորմեսցի եւ նմա փառք յաւիտեան:*

*Այ· սիրուն համար ի մոմէ եւ ի ձիթէ պատրաստ պահէք եւ սպիտակ լաթով բռնէք, աղաչեմք:**

## ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ· 50·

### Էջմ· No. 690/769 (Կար· 677) Բ· Գրքի 153·

*Խազգիրք երաժշտական, կաշեպատ կազմով* 8½×6½ *սմ·, մագաղաթ, մանր բոլորգրով·*

84բ· *Փառք ամենասբ· երրորդութեն· եւ մի ածութեն· հաւր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ, այժմեւ միշտ եւ յաւիտեանս յաւիտեն·*

*Արդ յանկ ելեալ կատարեցաւ տաղս որ կոչի տետր, ձեռամբ յոգնամեղի եւ յոյժ մեղապարտի Գալստի անուամբ միայն աբեղայի սուտանուն կրաւնաւորի· ի դառն եւ յանբարի ժամանակի ի թվին* (!) *ՊՂԱ ի վանքս Աղջոց ընդ հովանեաւ սբ· Ածածնիս· եւ սբ· Ստեփաննոս նահատակիս եւ Թրի սբ· նշանիս եւ այլ բազմահաւաք սրբոցս· յիշատակ մեզ Մխիթարի եւ Գալստի եւ ծնաւղացն հանգուցելոցն եւ կենդանեացն· Եւ որք հանդիպիք տեսանելով, յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր եւ Ած· զձեզ յիշէ յիւր արքայութեն· ամէն եղիցի եղիցի:*

## ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ· 51·

### Ձեռ· Էջմ· No. 903/939

*Ճաշոց, թուղթ, երկսիւն, բոլորգիր Գալուստ գրչի ձեռքով Աղջոց վանքում: Ունի լուսանցքի եւ սկզբնազարդեր, միջակ,* 339բ· *եղջերու լուսանցքում, սրբոց պատկերներ, երբեմն, լուսանցքում:*

550բ· *Յիշատակարան սբ· գրոցս*

*Փառք անբաժանելի եւ միասնական սբ· երրորդութեն· եւ մի ածութեն· հաւր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ յամենայն արարածոց յիմանալեաց եւ ի զգալեաց, այժմ եւ միշտ եւ յաւիտեան:*

---

*Ապա տարբեր գրով ստացող Աստուածատուրի յիշատակարանն է, այժմ եպս·, որ նուիրում է Հոռոմոսի վանքին եւ հուսկ յետոյ տարբեր գրով «ի թվ· ՋԼԴ» Սարգիս կաթուղիկոսի եւ Գրիգոր վարդապետի յիշատակարանը, որոնք կրկին հաստատում են, որ տարեգիրքը Հոռոմոսի վանքին մնայ: Կազմը հին է, կաշեպատ եւ օրնամենտներով, թւում է հէնց սկզբնականը:

Ձ-ի բովանդակութիւնն է Ճաշոց, Սաղմոսները կրճատ· Տօնացոյց երգերով: Լաւ բոլորգիր, սկզբնազարդերով եւ լուսանցքի զարդերով, լուսանցքում սուրբերի պատկերներ, կենդանիներ· ոչ շքեղ, բայց լաւ: